

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ
«2012-2013 ՈՒՍՏԱՐՎԱ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ»
ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 12-03-2013թ. N04/071/2503-13 գրությամբ ներկայացված «2012-2013 ուստարվա Հայաստանի ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ» մրցույթի կարգի պահանջները՝

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում «2012-2013 ուստարվա Հայաստանի ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ» մրցույթը կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել մարզային հանձնաժողով հետևյալ կազմով՝
Բաղայան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/
Ստեփանյան Ռ.- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի տեղակալ
Ղազանչյան Ռ. - Գավառի ավագ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի
Ջանիբեկյան Լ. - Սևանի N3 հիմնական դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի
Գալստյան Մ. - Մարտունու ավագ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի
3. Հանձնաժողովին՝ համաձայն «2012-2013 ուստարվա Հայաստանի ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ» մրցույթի կարգի պահանջների՝ 2013 թվականի ապրիլի 10-ին կազմակերպել և անցկացնել մրցույթի մարզային փուլը՝ ժամը 11⁰⁰-ին մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏԻ Ժ/Պ՝

Ա. ՀԱԿՈՒՅԱՆ

